



## Գերմանահայոց կենտրոնական խորհրդում նոր վարչություն է ընտրվել

Գերմանահայոց կենտրոնական խորհրդի գլխավոր համագումարը 2015թ. նոյեմբերի 15-ին Մայնի Ֆրանկֆուրտում ընտրեց խորհրդի նոր վարչություն՝ երեք տարի պաշտոնավարման ժամկետով: Նիստը բացեց Բոխումի Ռուհր համալսարանի փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միհրան Դաբադը: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Փարիզի վերջին ահաբեկչության զոհերի հիշատակը:

Խորհրդի վարչության նախագահի պաշտոնում ընտրվեց **Ժակլին Խաչատուրյանը**: Փաստաբանը ակտիվորեն ներգրավված է տեղական քաղաքականության մեջ և երկար տարիներ պայքարում է գերմանական հասարակության մեջ Օսմանյան կայսրության կողմից իրականացված հայոց ցեղասպանության նկատմամբ մերժողական կեցվաքի դեմ:

**Սոնա Հակոբյանը** ստանձնեց նորընտիր նախագահի տեղակալի պաշտոնը: Մասնագիտությամբ ճարագետ կոնսկտրուկտոր և փայլուն տեխնիկական-վերլուծական ունակությունների տեր նա ունի միջմշակութային բնագավառի աշխատանքի լայնածավալ փորձ:

Տնտեսագետ **Օհանես Ալթունքայան** զբաղեցրեց գանձապահի պատասխանատու պաշտոնը: Նրա կենսագրականը համատեղում է տնտեսական փորձաքննության բազում տարիների փորձը տարաբնույթ նախագծերի կառավարման և քաղաքական աշխատանքի հետ:

Վարչության մյուս անդամ ընտրվեց **Անի Սմիթ-Դագեայանը**: Նա քաղաքագետ է, ասպիրանտ և միջազգային քաղաքագիտության դասախոսուհի: Նրա նոր երիտասարդության հարցերի հանձնակատարի պաշտոնը ներառում է նոր սերնդի շրջանում քաղաքական պատասխանատվություն բարձացումը, ինչպես նաև այս բնագավառում մշակութային ու կրթական ծրագրերի իրականացումը:

**Մամվել Լուլուկյանը**, ով հանձն առավ քարտուղարի պաշտոնը, խոշոր ընկերության մասնաճյուղի տնօրեն է: Նա ունի ճշգրիտ գործելաոճ, փայլուն բանակցային ունակություններ, ինչպես նաև երկար տարիների համայնական աշխատանքի փորձ:

Նորընտիր վարչությունը մեծ նվիրումով հետամուտ է լինելու հայկական մշակույթի պահպանման և ցեղասպանության ճանաչման գործին: Միննույն ժամանակ երիտասարդ հանձնախումբը ցանկանում է նպաստել ընդհանուր հասարակության բարեկեցությանը: «Հայկական սփյուռքը գերմանական հասարակության մի մասն է, ինչպես մի մասն է հայերի պատմությունը Գերմանիայի պատմության մեջ: Պատասխանատվություն ստանձնելով մեր ընդհանուր անցյալի ու ապագայի նկատմամբ, մենք տեսնում ենք մեր պարտականությունները երկու հասարակությունների միջև առկա բարեկամության խորացման մեջ, ինչը հնարավոր է միասնաբար խոչընդոտների հաղթահարման և համատեղ համագործակցության միջոցով: Միայն ազնիվ գերմանա-հայկական բարեկամությունը կարող է ապահովել մեր առջև ծառայած մարտահրավերների լուծումը՝ մեր հայրենակիցներին հավատարմությամբ և համերաշխությամբ օժտված միասնական հասարակություն նեղրավելու գործում»,- իր խոսքում ընդգծեց վարչության նոր նախագահ Ժակլին Խաչատուրյանը:

Գերմանահայոց կենտրոնական խորհրդի վարչություն  
Մայնի Ֆրանկֆուրտ, 18.11.2015

Vorsitzende  
Jaklin Chatschadorian  
Tel. +49 (0) 15753208739  
jaklin.chatschadorian@zentralrat.org

Bankverbindung  
Sparkasse Leverkusen  
Konto Nr. 118365543  
BLZ 37551440

Stellvertretende Vorsitzende  
Schatzmeister  
Schriftführer  
Jugendbeauftragte

Sona Hakobyan  
Ohanes Altunkaya  
Samvel Lulukyan  
Ani Smith-Dagesyan